

ասոնք. տնկուող՝ առտուն կանուխ «եկեղեցու դրան», «հոգեւոր խօսքը ջամբելու համար ուսումնական կարգի հայ երկսեռ երիտասարդութեան», ինչպէս կը յայտարարէր պատին փակուած կարմիր գիրերով ազդը: Անշուշտ պէտք է լուռ անցնիլ խաչագողներէն, որոնք գիրք ծախելու պազար կ'ընէին ժամերուն բակը, իրենց սրտառուչ դժբախտութեան լուսապսակին մէջ փրկելով մեծապատիւ ու նորօրինակ սա մուրացկանութիւնը: Ու քիչ մըն ալ շփուիլ ու անցնիլ այն միւսներուն հետ, երկար փողկապով, հիւծած մագերով պատանիներ, թերթի խմբագիր եւ ուսանող նոյն ատեն, որոնք կերպը գտած էին յեղափոխական սուրբ աւանդութեանց հետ հաշտեցնել եւ գիտական ոգի, եւ մարտական եռանդ, եւ սոցիալիստական, տնտեսական, կուլտուրական հարցերու հանդէպ լափլիզող հետաքրքրութիւն:

Յեղափոխական Մաթիկը պրոտոտիպն էր (ինչպէս) գործածեց ինք սա բառը չեմ լաւ յիշեր որ տեսակ յեղափոխականին համար այս գալոց դասակարգին:

Առայժմ, գեղին, այսինքն՝ Վասֆիին ահէն դուրս (դժբախտութիւնը մեր յեղափոխութեան, որ այսպէս ուստիկանի կամ քուրճի կտորի մը մնաց ենթակայ) տրիբունը, «առանց կարիքի», շուտով կը դառնայ իր հիմնանիւթին - յեղափոխութեան:

Խո՛ր՝ իմ զարմանքը, վախով շփոթուելու չափ, այն թեթեւութեան մասին, որ այդ ահաւոր բառինն է անոր շրթներուն: Տասը տարուան խստութիւն կայ մեր ետեւը: Ու ջարդերու ամբողջ լեռը: Իմ ականջիս անիկա կը ճնշէ, ինչպէս կապարը թորուող: Քանի մը պարբերութիւն՝ եւ անպատճառ ահաւոր տարա՛զը՝ ինչպէս աւագերէց Օհանին քարոզին մէջ անխուսափելի կամուրջները, հանգիստի քարերը: Այս անփութութիւնը, թեթեւութիւնը ի վերջոյ կը տպաւորէ զիս, ա՛յնքան՝ որ պահ մը կասկած կու գայ վրաս այս ամէնուն, մա՛նաւանդ սա մարդոց լրջութեան: